

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՑԿՅԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՃԱՌԸ

Սեպտեմբերի 11—13 օրերին Դետրոյտի մերձակա Սաութֆիլդ քաղաքում տեղի է ունեցել Հ. Բ. Ը. Միության համագաղութային լսարանական հավաքույթը, որին մասնակցել են ավելի քան 60 ներկայացուցիչներ սփյուռքի զանազան գաղթօջախներից:

Հավաքույթի ընթացքում ընթերցվել են երեք զեկուցումներ:

Սեպտեմբերի 13-ին, ի պատիվ այցելու հյուրերի, կազմակերպվել է ընդունելություն-ճաշկերույթ, որի ընթացքում Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար **Ալեքս Մանուկյանը** հանդես է եկել բովանդակալից ճառով:

Սույն ճառը ներկայացվում է «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը՝ իր շահեկանության համար:

«Վերջին երկու օրերու խորհրդակցությունները անհուն բավարարությամբ կլեցնեն մեզ. այն ջերմ հետաքրքրությունը, այն սերն ու նվիրումը զորս գտանք ձեր մեջ՝ Բարեգործականի նկատմամբ՝ **մեծապե՛ս կխանդավառեն մեզ:**

Ոմանք Բարեգործականի ուժը կտեսնեն անոր **նյութական հարստության** մեջ, բայց մենք այդ ուժը կտեսնենք Միության **մարդկային հարստության** մեջ. և մեր վերջին օրերու հանդիպումներուն մեջ ավելի ևս այդ համոզումը արմատացավ մեր մեջ:

Մենք հաստատեցինք, թե հակառակ մեր բազմապիսի կորուստներուն և հուսալքումներուն, **կա Բարեգործականի սերունդ մը,** որ հետզհետե պիտի գա ձեռք առնել Միության ղեկը և զայն առաջնորդել իր **պատմական առաքելության** ճամբուն վրա:

Ի՞նչ կակնկալենք մենք Բարեգործականի սերունդեն. **ի՞նչ բան** կսահմանե անոր գաղափարականը և **ինչպիսի՞** առաքելության մը պետք է կոչվի ան: Հարցումներ են ասոնք, որոնք հաճախ կհարցվին, սակայն հաճախ չէ որ բավարարող պատասխան կտրվի անոնց:

Անցնող երկու օրերուն բավական լուսաբանվեցան այս հարցերը:

Բարեգործականի գաղափարականը կապված չէ խոր փիլիսոփայու-

թյանց. ան ամեն **ողջմիտ** հայու գաղափարականն է, որ դրված է հասկնալի տարազի տակ և կկիրարկվի հայ կյանքի **առօրյային** մեջ:

Այդ գաղափարականը կբխի մեր ազգային **նվիրականության գիտակցութենեն** ու պաշտպանութենեն. այդ գաղափարականը խարսխված է **նույնինքն հայ հոգիին** մեջ և իր սնունդը կառնե այդ հոգիին **ավիշեն:**

Հաճախ կրկնած ենք և այսօր կուզենք **անգամ մը ևս** շեշտել թե առանց այդ գաղափարականին՝ Բարեգործականը պիտի դառնար նպաստ բաշխող կազմակերպություն մը:

Եթե Բարեգործականը լոկ նպաստ բաշխող կազմակերպություն մը ըլլար՝ հայ զրկյալներու ֆիզիքական կարիքները միայն գոհացնելու համար, այդ սահմանափակ ծառայության գործադրութենեն ետք **դեր մը պիտի չմնար** կատարելիք անոր: Սակայն, Բարեգործականը այդ ֆիզիքականեն անդին՝ **հոգիներ** մշակելու և **հոգիներ հայացնելու** ամենեն նվիրական գործին կոչված է միշտ: Անոր համար է որ անոր գործունեությունը կծավալի բարեսիրականեն անդին՝ կրթական, մշակութային և երիտասարդական բնագավառներե ներս:

Բարեգործականը **ապա-քաղաքական** կազմակերպություն մըն է բայց **ոչ-անսկզբունք** և ազգային իշխանության հանդեպ **անտարբեր** մարմին մը:

Անոր համար **նվիրական** են հայրենի **հողն** ու հայրենի **ժողովուրդը:** Այդ պատճառով էր որ մեր հայրենիքի ամենեն դժվար օրերուն՝ Միությունը օժանդակություն ընծայեց անոր:

Բարեգործականի հավատավոր անդամակցությունը իր հավատքի ջահը կվառե **Սուրբ Էջմիածնի անապակ կանթեղեն.** իր պատմության ներշնչումը կստանա նույնինքն Մայր Աթոռի հավերժական իրականութենեն:

Բարեգործականը կհավատա մանավանդ հայության ապագային և ապագային առաջնորդող ուղիներուն:

Հետևաբար, **Բարեգործականի** անդամ մը չի կրնար անտարբեր վերաբերում մը ունենալ այս նվիրականության հանդեպ, որովհետև անոնք կը-կազմեն իր հավատքին ու գոյության հիմերը:

Պատահականություն մը չէ որ մենք այս հանդիպումը կազմակերպեցինք Միության Ադամանդյա Հոբելյանի նախօրյակին, որպեսզի հանդիսության աղմուկեն ու ցնծութենեն հեռու՝ մենք ամփոփվեինք և անկեղծ ու բարեխիղճ քննության մը ենթարկեինք Միության անցած երեք քառորդ դարու պատմությունը, **դասե՛ր** վերցնեինք անկե և ուսանեինք մեր սխալներեն:

Ոևէ անհատի ու կազմակերպության նման՝ **Բարեգործակա՛նն** ալ սխալներ **գործա՛ծ** է վստահաբար. սակայն, ան արիությունը ունի **գտնելո՛ւ, մատնանշելո՛ւ** և **սրբագրելո՛ւ** այդ սխալները, որպեսզի անոնք խոչընդոտ չդառնան անոր ապագա ուղիին վրա:

Քարացումի և **մահվան կդատապարտվի** այն կազմակերպությունը, որուն ղեկավարները անսխալական կդավանին իրենք զիրենք:

Մենք կկարծենք որ Բարեգործականի ուժականության և վերանորոգման գաղտնիքը անոր շարունակական **ինքնաքննության** մեջ է, որպեսզի կարենա քայլ պահել պատմության հետ:

Միության 75-ամյակի նախօրյակին համախմբվելով՝ մենք ի վիճակի կդառնանք նաև պարզելու մեր գործունեության **ապագա ուղին** և **հորիզոնը:**

Տագնապներով և անակնկալներով հղի պատմական ժամանակաշրջանի մը մեջ կապրի հայությունը, ու Բարեգործականը **չի կրնար** շարունակել

իր նախախնամական դերը անցյալի գործելակերպով. նոր ժամանակները **նո՛ր ոգիի, նո՛ր գաղափարներու** և **նո՛ր գործելակերպի** հարկադրանքին առջև կդնեն մեզ. և մենք **պետք է** ըմբռնենք **պատմակա՛ն** այս ճշմարտությունը և զայն **ցոլացնե՛նք** մեր կյանքին մեջ:

Մեր հավաքույթը, և հոն հայտնված սրտցավ ու անկեղծ գաղափարները, մեծապես սատարեցին ճշմարտություններու բյուրեղացման: Մենք անկեղծորեն կգնահատենք **բոլորիդ** մասնակցությունը, **բոլորիդ** հայտնած կարծիքներն ու գաղափարները, որովհետև անոնք պիտի օգնեն մեզի մեր ապագա գործունեության մեջ և մեր քայլերուն դիմաց պիտի հանդիսանան ապահովության կողմնալույսեր:

Ձեզմո՛վ, ձեր **հավատքո՛վ,** ծառայելու ձեր պատրաստակամությամբ ու **կամքով՝** մենք մեզ ավելի **զորացա՛ծ** կզգանք և ավելի **ինքնավստահ** կերպով կփարինք Միության գործին, որպեսզի բոլորս մեկ լավատեսությամբ դիմավորենք **Միության Ադամանդյա Հոբելյանը՝ ի փառս բազմաչարչար ազգին և անոր լուսաշող ապագային»:**